872. ՆԵՂ ՊԱՏՈՒՀԱՆԻ գլխին, 2 տող.

ՂԱԶՐ
ՅԻՇ
ԷՔ

ՂԱԶԱՐ ՅԻՇԷՔ:

Լուսանկ. 130.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՉԿԱՆ ԿԱՄ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՏԵՍԵԼ

*873. ԽԱՉՔԱՐԻ ստորին մասում, որը գտնվում էր Կոսի կալի եկեղեցում, ագուցված նրա խորանի կամարի վրա.*

Թվին :ՈՀԹ: (1230). Աստուած ողորմի Սարգսին։

*Հրատ. Լալաեան, V, 334։ Բարխուդարեանց, 256։*

*874. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, Կոսի կալերի գերեզմանատան մեջ.*

Ամիրերին, Մելիցքու, Բուրխս. թվին :Ռ: (1551):

Մանոթ. *Անշուշտ վատ են ընթերցված։*

*Հրատ. Բարխուդարեանց, 256։*

*875. ԽԱՉՔԱՐԻ վրա, որն ագուցված է եղել Վերին վանքի հյուսիսային կամարի տակ։*

Թվին :ՉԻ: (1271). Ես Տուտուր, որդի Ջանասի կանգնեցի զխաչս ինձ և եղբաւր իմոյ:

*Հրատ. Բարխուդարեանց, 254։*

*876. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը եղել է Վերին վանքի տաճարի մեջ.*

Այս է հանգիստ սուրբ Գրեգորոյ Գանձակայ եպիսկոպոսին:

*Հրատ. Բարխուդարեանց, 255։ Լալաեան, V, 334։*

*877. ԽԱՉՔԱՐԻ ՄԱՍԻ վրա, որը եղել է Միջին վանքում.*

Այս սուրբ խաչս է տէր Առաքելին Աստուծոյ:

*Հրատ. Բարխուդարեանց, 254։*

*878. ԽԱՉՔԱՐԻ վրա, նախորդի մոտ.*

Այս խաչս է Կոսին:

*Հրատ. Բարխուդարեանց, 254։*

## 90. ԹՈԴԱՆ ԳՅՈՒՂԱՏԵՂ

*Գտնվում է Ղարաքուլաղից Մանաթիշ գյուղը տանող ճանապարհի վրա։ Գյուղատեղում կիսավեր մնում են եկեղեցին և մի մատուռ։*

*879. ԽԱՉՔԱՐԻ վրա, որ կանգնած է եղել մատուռի մոտ.*

Ի թուին :ՉԾԷ: (1308). Ես Գրիգոր ու Պապաք կանգնեցաք զխաչս ի բարեխաւսութիւն ծնողաց մերոց · · · :

*Հրատ. Բարխուդարեանց, 252։ Լալաեան, V, 334։*

*880. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային ավանդատան վրա.*

Կամաւն Աստուծոյ ես տէր Եղիայ շինեցի սուրբ եկեղեցիս յիշատակ հոգւոյ

իմո, կողակցին Բեզադին, ուղւոյն Աշիբէկին ի ժամանակս Շահ Սեփին, խանութիւն Մուրթուզա ղուլի խանին քահուլդ. կաթուղիկոս Գանձասարայ տէր Գրիգորին. թվ. ։ՌՂԶ։ ին (1647)։

Ծանոթ. *Ըստ երևույթին Ջալալյանցի ժամանակ ավելի ամբողջական է եղել, որից և առնում ենք հիմնականում։*

*Հրատ. Ջալալեանց, I, 210։ Բարխուդարեանց, 252։ Լալաեան, V, 334։*

## 91. ԿԱՄՈ ԴՑՈՒՂ (ՀՆՍԻՄ՝ ԲԱԽՇԻԿ)

*Այս գյուղը ավերված է եղել 1870 թ. շենացրել են Հաջիքենդի վերաբնակիչները։ Մի քանի տասնամյակ առաջ թողնելով նախկին հարմար դիրքը, գյուղը տարածել են ներքև, 1½ կիլոմետր դեպի արևմուտք։ Նախկին գյուղատեղում մնում է կիսավեր եկեղեցին, թաղածածկ և կոփածո քարերով շինված. պատերի մեջ որպես շինանյութ դրված են խաչքարեր և տապանաքարեր։ Եկեղեցին կոչվել է Ամենափրկիչ։*

*Գյուղից մոտ երեք կիլոմետր հարավ, խճուղու եզրին, այժմ Մուրթունիս կոչվող հանդամասում մնում են գյուղի ավերակները։ Բարխուդարյանցի ժամանակ գյուղատեղը կոչվել է* Մրցունիս, *այժմ անվանում են* Մուրթունիս:

*Այս միջավայրից հավաքած մեր 14 արձանագրությունից 10-ը հրատարակվում են առաջին անգամ։*

*881. **ԽԱՉՔԱՐ**, գեղաքանդակ, ագուցված է հարավային պատի մեջ, ներքուստ, քիվին և թևերի շուրջը 3 տող.*

ԽՆՍՓՐԿՈՒԹԻՀՈԳՈՆ ԹՐՎ

ԷՏԻՆ ԹՎ ՌԲ

ԷՏԻՆ Խ[Ա]ՉՍ ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈ[Ց]Ն ԹՐՎ[Է]ՏԻՆ. ԹՎ[Ի]Ն[] ։ՌԲ։ (1553)։

Ծանոթ. Թրվէտ *անձնանունը, հավանաբար,* Թուրվանդ-*ի տեղական ձեն է։*

*882. **ԽԱՉՔԱՐ**, ագուցված է արևմտյան պատին, արտաքուստ. թևերի շուրջը միայն թվականը.*

ԹՎ ՌԳ

ԹՎ[Ի]Ն[]. ։ՌԳ։ (1554)։

*883. **ԽԱՉՔԱՐ**, փոքր, ագուցված է հարավային մուտքի արևմտյան կողին. քիվին 2 տող.*

ՍԲԽՆՍ ԷՏԳԱՐԵՂԵՍ
ԱՊԵՏԹՎՌՀԹ

ՍԲ. Խ[Ա]ՉՍ Է[Տ]ԳԱՐ[Ի]Ն[], ԵՂԵՍ[Ա]ՊԵՏ[Ի]Ն[]. ԹՎ[Ի]Ն[] ։ՌՀԹ։ (1630)։

*Հրատ. Բարխուդարեանց, 269։*

*884. **ԽԱՉՔԱՐ**, ագուցված է հարավային ավանդատան արևելյան պատին, ներքուստ. քիվը ծածկված պատով. թևերի շուրջը 4 տող.*

ՍԲ ՄԽ
ԽՆՍ ԻԹ
ՀՈԳ ԱՐ
ԻՆ

ՍԲ. Խ[Ա]ՉՍ ՄԽԻԹԱՐԻՆ ՀՈԳ[ՈՒ]ՑՆ[]: